ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ. 99-2-82, կայք yeghegis am,էլ. հասցե shatin vayotsdzor@mta gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2019 թվականի N 8 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասով, 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

*ավագանին որոշում է՝*

1. Հաստատել 22-ը փետրվարի 2019թ. թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝
2.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,
3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Եղեգիս համայնքի ավագանու կողմից ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու և ավագանու 20-ը դեկտեմբերի 2018 թվականի թիվ 69Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին,
4.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Սալլի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
5.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
6.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2018-2022 թ.թ. հնգամյա զարգացման ծրագրի՝ 2018 թվականի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին:

| | Կողմ 8 | Դեմ 0 | Ձեռնպահ 0 |
|---|---|---|---|
| Բադալյան Նվեր | [signature] | | |
| Գևորգյան Արման | [signature] | | |
| Հարությունյան Աշոտ | [signature] | | |
| Հովհաննիսյան Ռուբիկ | [signature] | | |
| Մարկոսյան Ռազմիկ | [signature] | | |
| Մարտիրոսյան Զոյա | [signature] | | |
| Մարտիրոսյան Նորայր | [signature] | | |

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` <u>ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ 99-2-82, կայք yeghegis am,էլ հասցե shatin vayotsdzor@mta gov am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2019 թվականի N 9 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 14/12/2017 թվականի թիվ 29-Ն որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 31/08/2018թ. թիվ 57Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունները

Ավագանին որոշում է՝

Սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրել ֆինանսական օգնություն:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման բացակա

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա բացակա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 1
Եղեգիս համայնքի ավագանու
22-ը փետրվարի 2019թ, թիվ 9 Ա որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝

1. Քնարիկ Սաշայի Նազարյան, բն. Քարագլուխ, սոցիալապես անապահով ընտանիք, 20 000 ՀՀ դրամ,
2. Մանուկ Նարիբեկի Մանուկյան, բն. Շատին, դեղորայք ձեռք բերելու համար, 50 000 ՀՀ դրամ,
3. Թերեզա Վանիկի Գրիգորյան, բն. Թառաթումբ, սոցիալապես անապահով ընտանիք, 20 000 ՀՀ դրամ,
4. Մարջանիկ Շաշայի Նազարյան, բն. Շատին, սոցիալապես անապահով ընտանիք, 20 000 ՀՀ դրամ,

*ԸՆԴԱՄԵՆԸ՝ 110 000 /մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ*

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

Հավելված 2

Եղեգիս համայնքի ավագանու

22-ը փետրվարի 2019թ., թիվ 9 Ա որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝

1. Արմեն Արայի Խաչիկյան, բն. Թառաթումբ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
2. Աննա Մանուկի Օհանյան, բն. Թառաթումբ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
3. Քրիստինե Ստեփանի Ասատրյան, բն. Հերմոն, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
4. Սվետլանա Արթուրի Մարտիրոսյան, բն. Հերմոն, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
5. Մարինե Սահակի Հովհաննիսյան, բն. Հերմոն, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
6. Անուշավան Կամոյի Մարտիրոսյան, բն. Շատին, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
7. Աննա Արզումանի Մարտիրոսյան, բն. Շատին, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
8. Դավիթ Շահենի Գրիգորյան, բն. Շատին, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
9. Անդրանիկ Սողոմոնի Պողոսյան, բն. Շատին, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
10. Գայանե Ժիրայրի Պողոսյան, բն. Հորբատեղ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
11. Լիլիթ Ազատի Սարգսյան, բն. Արտաբույնք, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
12. Տիգրան Սամվելի Հարությունյան, բն. Արտաբույնք, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
13. Մարիամ Վարազդատի Աբրահամյան, բն. Սալլի, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
14. Էդվարդ Արտաշի Հակոբյան, բն. Հորս, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
15. Տիգրան Մեխակի Գրիգորյան, բն. Աղնջաձոր, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
16. Իշխան Մանուկի Աբրահամյան, բն, Քարագլուխ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
17. Կարեն Աբրահամի Եղոյան, բն, Շատին, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
18. Տիգրան Հայկի Կարապետյան, բն, Շատին, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,

*ԸՆԴԱՄԵՆԸ՝ 540 000 /հինգ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ*

Համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ. 99-2-82, կայք yeghegis.am,էլ. հասցե shatin.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2019 թվականի N 10 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ, ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 20-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 69Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մարտի 20-ի թիվ 15 որոշման թիվ 1 հավելվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրության>> 3-րդ գլխի 10-րդ կետի պահանջները

*Ավագանին որոշում է՝*

1.Անվավեր ճանաչել ավագանու 20-ը դեկտեմբերի 2018 թվականի <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Եղեգիս համայնքի ավագանու կողմից ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին>> թիվ 69Ա որոշումը:

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կազմում Եղեգիս համայնքի ավագանու կողմից խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրել *Արտակ Մարտինի Մարկոսյանի* թեկնածությունը:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղդասարյան Նվեր

Գևորգյան Արման բացակա

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա բացակա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ. 99-2-82, կայք yeghegis.am,էլ. հասցե shalin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2019 թվականի N 11 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱԼԼԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումն և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

*Ավագանին որոշում է՝*

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Սալլի բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Սալլի բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-038-0101- , մակերեսը՝ 0,02000 հա/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ կապ, բջջային ցանցի կառուցման համար:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման բացակա

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա բացակա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ. 99-2-82, կայք yeghegis.am,էլ. հասցե shalin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2019 թվականի N 12 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումն և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

*Ավագանին որոշում է՝*

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Հորս բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-031-0110-0390, մակերեսը՝ 0,03278 հա/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների, օրվա կարգավորիչ ջրամբար կառուցելու համար:
2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ. 99-2-82, կայք yeghegis.am,էլ. հասցե shalin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2019 թվականի N 13 Ն

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 Թ.Թ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով

*Ավագանին որոշում է՝*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2018-2022 թ.թ. հնգամյա զարգացման ծրագրի՝ 2018 թվականի իրականացման հաշվետվությունը համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
22-ը փետրվարի 2019թ., թիվ 13 Ն որոշման

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018Թ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Սուբվենցիա

- Շատին բնակավայրում փողոցային լուսավորության անցկացում 1330մ,մեր ներդրումը 60 %, արժեքը 3,480,000 դրամ
- Քարագլուխ գյուղում ոռոգման համակարգի անցկացում 400մ, մեր ներդրումը 40 %, արժեքը 7,302,000 դրամ

Համայնքի բյուջե

- Հորս բնակավայրերում փողոցային լուսավորության անցկացում 2200մ ,արժեքը 3,740,000 դրամ
- Եղեգիս բնակավայրի դպրոցում նախակրթարանի բացում համաֆինանսավորման միջոցով,արժեքը դրամ 2,398,500 դրամ
- Եղեգիս բնակավայրում խմելու ջրագծի անցկացում 800 մ ,արժեքը 600,000 դրամ
- Արտաբույնք բնակավայրում փողոցային լուսավորության անցկացում 1380 մ,արժեքը 3,408,000 դրամ
- Սալլի բնակավայրում հանդիսությունների սրահի վերանորոգում,արժեքը 609,400 դրամ
- Թառաթումբ բնակավայրում խմելու ջրագծի վերանորոգում 900մ,արժեքը 760,450 դրամ
- Արտաբույնք բնակավայրում <<Սև Աղբյուր >> կոչվող տարածքում խմելու ջրագծի վերանորոգում, արժեքը 105,000 դրամ
- Քարագլուխ բնակավայրում հանդիսությունների սրահի սանհանգույցի կառուցում, արժեքը 348,000 դրամ
- Եղեգիս բնակավայրում ճանապարհային արհեստական խոչընդոտների կառուցում,արժեքը 350,000 դրամ
- Քարագլուխ և Հերմոն բնակավայրերում փողոցային լուսավորության սյուների համար փոսորակների փորում, արժեքը 600,000 դրամ

<<Վերջին Օրերի Սրբեր>> հիմնադրամ

- Հերմոն բնակավայրում խմելու ջրագծի անցկացում 1500 մ, մեր ներդրումը 318,000 դրամ

Վիվասել ՄՏՍ

- Քարագլուխ և Հերմոն բնակավայրերում փողոցային լուսավորության անցկացում 3,5կմ,արժեքը 26,000,000 դրամ

Համայնքի ղեկավար Ա. Ստեփանյան